ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հոկտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

146
(2812)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՄԵՐԺԵԼ Է

Արցախում 2023 թվականի սեպտեմբերի 19-ին սկսված ռազմական ագրեսիվ գործողությունների ընթացքում, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների, Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը կապվել է Ադրբեջանի ԱԱԾ պետի տեղակալի հետ: Նա առաջարկել է շտապ դադարեցնել կրակը, եւ, որպես նորընտիր նախագահ, առաջարկել է՝ իր փոխարեն մեկ ուրիշ՝ ավելի ընդունելի մարդ մասնակցի բանակցություններին (գուցե իր ընտրությունն է հարձակման պատճառ դարձել), միայն թե Արցախի ցեղասպանությունը կանգնեցվի: «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ Սամվել Շահրամանյանը հնչեցրել է նաեւ կոնկրետ անուններ՝ առաջարկելով, որ ԼՂՀ իշխանության կողմից Սամվել Բաբայանը ներգրավվի բանակցություններում, սակայն ադրբեջանական կողմը նրան սուտասան եւ ապատեղեկատվություն տարածող է համարել՝ առաջարկելով Բաբայանին Հայաստան ուղարկել: Շահրամանյանն առաջարկել է նաեւ Վիտալի Բալասանյանի թեկնածությունը, սակայն ադրբեջանական կողմը նրա մասով էլ առաջարկել է ուղարկել Հայաստան եւ դատապարտել նրան: Սամվել Շահրամանյանի մյուս առաջարկների հետ չհամաձայնելով՝ ադրբեջանական կողմը պնդել է, որ իրենց պահանջները պետք է կատարվեն, պարզապես պետք է ստորագրել Արցախի Հանրապետությունը լուծարելու հայտարարությունը, եւ այդ դեպքում կրակը կդադարի, ու արցախցիները անվտանգ կապրեն իրենց տներում: Շահրամանյանը բավարարել է առաջարկը ուժի սպառնալիքի տակ, փոխհամաձայնեցված տեքստը հանրայնացրել է, ինչի արդյունքում, իհարկե, կրակը դադարեց, բայց Արցախի Հանրապետությունը մի քանի օրվա ընթացքում ամբողջությամբ հայաթափվեց:

4-օրյա պատերազմում զոհված Գեւորգ Վիրաբյանի քրոջը՝ Տաթեւիկ Վիրաբյանին (Տաթեւ Արցախ), շուրջ 25 օր է, ինչ կալանքի տակ են պահում. նա միակ կին քաղբանտարկյալն է, որը կալանավորվել է սեպտեմբերի 19-ին՝ ի պաշտպանություն Արցախի կազմակերպված բողոքի ակցիաների ժամանակ: Տաթեւիկ Վիրաբյանին մեղադրանք է ներկայացվել զանգվածային անկարգության կոչեր հնչեցնելու եւ այդ անկարգություններին մասնակցելու համար: Կալանավորումից մոտ մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 15-ին, նրա վիճակը Աբովյան քրեակատարողական հիմնարկում վատացել էր, բայց նույնիսկ դա չազդեց քաղաքական իշխանությունների կողմից կայացված որոշման վրա: Իսկ ո՞վ է Տաթեւ Վիրաբյանը: Նրան ՔՊ-ն վաղուց էր թիրախավորել: Բանն այն է, որ Տաթեւը իշխող խմբակցության պատգամավոր, տխրահռչակ Հովիկ Աղազարյանի դեմ դիմում էր ներկայացրել Ազգային ժողով, որպեսզի ստեղծվի էթիկայի հանձնաժողով, եւ քննվի Աղազարյանի վարքը, սակայն ԱԺ-ն այդպես էլ չձեւավորեց հանձնաժողովը: Պատճառն այն էր, որ ապրիլի 15-ին Անահիտ Վիրաբյան անուն-ազգանունով օգտատերը հայտարարել էր, որ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանն իրեն սեռական բնույթի հայհոյանք է գրել «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, եւ հրապարակել էր անպարկեշտ նամակը: Պատգամավորի եւ տիկնոջ միջեւ խնդիրը եղել էր այն, որ Տաթեւ Վիրաբյանը, տեսնելով Աղազարյանի վիրավորական ու հայհոյախառը գրառումները զոհվածների թեմայով, անձնական նամակ էր գրել պատգամավոր Աղազարյանին եւ նախատել ու ամոթանք տվել: Ի պատասխան՝ ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանը նրան եւս հայհոյել էր: Իհարկե, դրանից հետո ծերունի պատգամավորը հայտարարեց, թե իր էջը, կարծես թե, կոտրել են, սակայն փաստերը հրապարակված էին, իսկ Աղազարյանը հայհոյելու համար այդպես էլ պատասխանատվության չենթարկվեց մինչ օրս: Աղազարյանը պատասխանատվության չի ենթարկվել նաեւ այս տարվա սեպտեմբերի 27-ին զոհված զինծառայողների ծնողներին եռաբլուրում հայհոյելու, դրանից առաջ էլ Արաբկիր վարչական շրջանում քաղաքացու կարտոֆիլը ոտքով հրելու եւ թափելու համար: Այսինքն՝ իրավապահ համակարգը տոտալ անգործության է մատնված, եւ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, փոխանակ քրեական արարքներ գործած օրենսդրին պատժի, Տաթեւ Վիրաբյանին է կալանավորել:

Խնամի-ծանոթ-բարեկամներին պետական համակարգում տեղավորելու արատավոր պրակտիկային վերջ տալու եւ այդ ամոթալի էջը մեր պատմության մեջ փակելու խոստում տված Նիկոլ Փաշինյանն ու իր թիմակիցները շարունակում են խաբել հասարակությանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ խմբակցության գյումրեցի պատգամավոր Էմմա Պալյանի եղբայրը եւ ամուսինը աշխատանքի են տեղավորվել ՀՀ Ազգային ժողովում: Այսպիսով, ՔՊ-ական պատգամավորի ամուսինը՝ Ալբերտ Մարտիրոսյանը, հենց կնոջ՝ Էմմա Պալյանի օգնականն է ԱԺ-ում: Թե ինչով է կոնկրետ օգնում Ալբերտը Էմմային, պարզ չէ, քանի որ մինչ այս Ալբերտը գործազուրկ է եղել: Թերեւս հիմա զուտ աշխատավարձ է ստանում: Իսկ ինչ վերաբերում է պատգամավորի եղբորը՝ Հայկ Պալյանին, ապա նա էլ ՔՊ-ական մյուս պատգամավորի՝ Կարեն Սարուխանյանի օգնականն է: Հայկ Պալյանը նաեւ ՔՊ-ի համար հայհոյախոսող «ֆեյք է աշխատում»: Հիշեցնենք, որ մինչ 2021 թվականը Էմմա Պալյանն ինքն էր գյումրեցի պատգամավոր Կարեն Սարուխանյանի օգնականը, իսկ 2021թ.-ի գարնանը վերցրեց պատգամավորական մանդատը: Էմմա Պալյանը նաեւ ԱԺ-ում վայելում է Ալեն Սիմոնյանի հովանավորությունը, քանի որ մինչ հեղափոխությունը Պալյանն Ալեն Սիմոնյանի ղեկավարած «Արարատնյուզ»-ում էր աշխատում: «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է թեմային, թե ինչպես են ՔՊ-ականներն իրենց ընտանիքի անդամներին, բարեկամներին եւ ընկերներին ԱԺ-ում եւ այլ պետական կառույցներում աշխատանքի տեղավորում: Այսպիսով, ստացվում է, որ նախկինների ԽՕԲ-ն քննադատող թավշյահեղափոխականները ոչ միայն չեն հրաժարվում այս արատավոր բարքից, այլեւ մեծ հաճույքով շարունակում ու ծաղկեցնում են այն:



«**Ժ**ողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանի նկատմամբ հարուցված քրեական գործի կարճման որոշումը: ՀՀ դատախազությունը հաստատեց, որ Գեղամ Պետրոսյանը կապ չունի իրեն մեղսագրվող սպանություն արարքի հետ: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Գեղամ Պետրոսյանի պաշտպան Վաղարշակ Գեւորգյանը դիմում էր ներկայացրել նախաքննական մարմին, որպեսզի Գեղամ Պետրոսյանի դեմ հարուցված քրեական գործը կարճվի, եւ նա արդարացվի: Ինչպես հայտնի է, 2019 թվականի օգոստոսի 4-ին «Երեւան Կենտրոն» ՔԿՀ-ից կամ բոլորին հայտնի «ԿԳԲ-ի պադվալից» ազատ արձակվեց «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանը: Անցել է շուրջ 3 տարի, սակայն Գեղամ Պետրոսյանի ազատ արձակվելուց հետո որեւէ քննչական գործողություն չէր արվում, եւ քրեական գործը մնացել էր Հակակոռուպցիոն կոմիտեի դարակներից մեկում: Հիշեցնենք, որ Գեղամ Պետրոսյանը մեղադրվում է 2008 թվականի մարտի 1-ին հրազենի գործադրմամբ Զաքար Հովհաննիսյանին սպանելու համար: Նրան մեղադրանք էր առաջադրվել՝ ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ սպանություն: Վերջինիս նախաքննական մարմինը կալանավորել էր, քանի որ քրեական գործով Գեղամ Պետրոսյանի դեմ ցուցմունք էր տվել ոստիկանության զորքերի ենթասպա Ալեքսանդր Ազարյանը՝ հայտնելով, թե տեսել է՝ ինչպես է Գեղամ Պետրոսյանը կրակել Զաքար Հովհաննիսյանի վրա: Ավելի ուշ փորձաքննության արդյունքները ցույց տվեցին, որ իրականում Պետրոսյանի զենքի եւ դիակում եղած պարկուճի տեսակները չեն համընկնում, եւ այդ հիմքով Պետրոսյանն ազատ արձակվեց: Նշենք, որ 2008 թվականի մարտի 1-ին սպանված 10 հոգուց որեւէ մեկի սպանության դեպքը բացահայտված չէ, չգիտենք՝ ով գնդակահարեց Երեւանի կենտրոնում 10 քաղաքացու: Նիկոլ Փաշինյանն իր այդ խոստումը եւս չկատարեց: Եւս մեկ հիշեցում. դեռ 2019 թվականի հուլիսի 12-ին «5-րդ» ալիքի եթերում ԱԺ պատգամավոր Թագուհի Թողմասյանը, անդրադառնալով Գեղամ Պետրոսյանի դեմ հարուցված քրեական գործին, հայտնել էր. «Ինձ համար մտահոգիչ է, որ մենք ունենք հանրությանը դուր գալու համար արդարադատություն: Սա նույնքան անընդունելի է, որքան զանգվի արդարադատությունը: Մենք չենք կարող որեւէ մեկի քիմքին հաճոյանալու համար արդարադատություն իրականացնել»: Ինչ վերաբերում է 2008թ. մարտի 1-ին սպանության համար մեղադրվող Գեղամ Պետրոսյանին, Թագուհի Թովմասյանը դեռ 2019-ին ասել էր. «Գեղամ Պետրոսյանի մասով բացահայտման վերջին դեպքը այդ շարքից է: Զաքար Հովհաննիսյանի սպանության մեջ է մեղադրվում. կարդացի, որ որեւէ առնչություն չունի, եւ փորձագիտական եզրակացությունն արդեն կա, որ իրեն ամրակցված զենքը եւ Հովհաննիսյանի մարմնի պարկուճները չեն համապատասխանում: Ինքը չի կրակել: Այսինքն՝ սա նշանակում է, որ պետք է նրան անմիջապես ազատ արձակել: Եթե նա անմեղ է, պետք է ազատ արձակել, որքան էլ չուզենանք»: Այդպես էլ եղավ, մինչդեռ այդ ժամանակ ՔՊ-ականները քննադատում էին իրենց գործընկեր Թովմասյանին:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽԸ ՉԻ՞ ՀԱՆՁՆՎԵԼ. ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ

Արցախը հանձնված չէ. «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանը հայտարարեց, որ Սամվել Շահրամանյանն Արցախը լուծարելու փաստաթուղթ չի ստորագրել:

-Պարոն Սարգսյան, Դուք՝ որպես Ստեփանակերտի քաղաքապետ, ի՞նչ կասեք, ի՞նչ էր կատարվում վերջին օրերին Ստեփանակերտում, ինչո՞ւ, ի վերջո, հանձնվեց Արցախը:

-Խաղ է կատարվել, Արցախը չի հանձնվել, մարդկանց անվտանգության համար են իրենց տարհանել, արդեն հակառակորդը շրջապատել էր Արցախը եւ իր գործողություններն էր շարունակում: Մարդկանց տեղահանել են, որպեսզի որեւէ վնաս չպատճառեն նրանց: Արցախը չի հանձնվել: Մարդիկ ասում են, որ Արցախը լուծարվել է, բայց նման բան չկա:

-Փաստացի ստորագրվել է այդ փաստաթուղթը:

-Ոչ մի բան էլ չի ստորագրվել, ոչինչ չի ստորագրվել:

-Բայց պարոն Շահրամանյանն ինքն է ստորագրել այդ փաստաթուղթը, եւ հունվարի 1-ից, համաձայն այդ փաստաթղթի, լուծարվում է Արցախը:

-Չկա նման բան, որեւէ փաստաթուղթ չի ստորագրվել:

-Այդ դեպքում ի՞նչ է ստորագրվել. ինքն է այդ մասին հայտնել, որ ստորագրել է:

-Եղել է խորհրդակցության նման մի բան, արդյունքում որեւէ փաստաթուղթ չի ստորագրվել: Նախագահը կամ որեւէ արցախցի չէր կարող ստորագրել, որ Արցախը լուծարվի:

-Պաշտոնապես ինչո՞ւ են հայտարարել այդ դեպքում:

-Չեմ կարող ասել, սակայն անձամբ ինձ նա ասել է, որ ոչինչ ստորագրված չէ: Ես էլ վստահ եմ դրանում, որ Սամվելը որեւէ թուղթ չի ստորագրել:

-Պարոն Սարգսյան, ասում եք, որ միայն անվտանգային խնդիրներից ելնելով՝ Արցախը դատարկվեց, բնակչությունը տարհանվեց, այսինքն՝ ըստ էության, չի հանձնվել, սակայն փաստ է մնում այն, որ այսօր Արցախի ԱԺ-ի, կառավարության շենքերի վրա բարձրացված է Ադրբեջանի դրոշը:

-Ազգային ժողովի շենքի վրա Ադրբեջանի դրոշ չկա, ընդամենը մեկ տեղում է նրանց դրոշը բարձրացված:

-Ադրբեջանական կողմը պարբերաբար հրապարակումներ է անում, որում երեւում է, որ այդ շենքերի վրա բարձրացված է իրենց դրոշը:

-Վերածննդի հրապարակում է բարձրացված: Առաջ այդ տեղում Լենինի արձանն է եղել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՊԱՀԱՆՋ

ՄԱՆԴԱՏԻՑ ՉԻ ՀՐԱԺԱՐՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Հանրային ձայն» կուսակցության ընտրացուցակի առաջին համարը՝ Արտակ Գալստյանը, որը կալանքի տակ է, պահանջել է իրեն ազատ արձակել: Նա դրա դիմաց խոստացել էր, որ վայր կդնի Երեւանի ավագանու անդամի իր մանդատը:

Բանն այն է, որ նախապես պայմանավորվածություն է եղել, որ «Հանրային ձայն»-ի առաջին համարը՝ կալանավորված Արտակ Գալստյանը, եւ երկրորդ համարը՝ Տիգրան Ուրիխանյանը, որի նկատմամբ հետախուզում է հայտարարված, հոկտեմբերի 17-ին պետք է հայտարարեին ավագանու անդամի մանդատները վայր դնելու մասին:

Արտակ Գալստյանը վերջին պահին զղջացել է ու նոր պահանջ առաջ քաշել, թե վայր կդնի իր մանդատը միայն այն դեպքում, եթե իրեն ազատ արձակեն բանտից:

Հիմա ստացվում է, որ Տիգրան Ուրիխանյանը եւս խաբված է, քանի որ նրան նախապես տեղեկացրել են, թե ինքը եւ Արտակ Գալստյանը պետք է հայտարարեն մանդատներից հրաժարվելու մասին, բայց վերջին պահին պայմանավորվածությունը խախտվել է:

Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ճշտել «Հանրային ձայն»-ի փոխնախագահ Վահան Ավագյանից: Վերջինս հաստատեց մեր տեղեկությունը: «Ես չեմ հերքում այդ տեղեկությունը: Ասեմ ավելին՝ Արտակ Գալստյանի քրեական գործի հիմքում հենց այդ փաստն է դրված, որ ինքն ավագանու անդամ է եւ հենց հետապնդումների արդյունքում է հիմա գտնվում կալանքի տակ: Արտակ Գալստյանը մանդատը վայր չի դնի: Նա սպասում է, որ դատը լինի, քանի որ ապացուցողական բազան շատ թույլ է կամ գոյություն չունի, ես սա փաստաբանական կոնսուլտացիաների հիման վրա եմ ասում: Ուստի Արտակ Գալստյանը գտնում է, որ մանդատը չի դնելու, ես էլ իմ կողմից ավելացնեմ, որ նա մեր կուսակցության նախագահն է՝ առաջին համարը, ինչու՞ պետք է մանդատը վայր դնի: Նույն նախադեպը մենք ունենք նաեւ Վանաձորում. Մամիկոն Ասլանյանը երկու տարի է՝ մանդատը վայր չի դնում: Սա բնականոն գործընթաց է, ինչո՞ւ Արտակ Գալստյանը պետք է մանդատը վայր դնի: Հավելեմ, որ շատ մարդիկ «Հանրային ձայն»-ին ընտրել են հենց Արտակ Գալստյանի համար: Քաղաքում նրա նկարներով պաստառներն էին, այսինքն՝ ինքը եթե մանդատը վայր դնի, կստացվի, որ իր ընտրողներին ասում է՝ իզուր եք ընտրել»,- ասաց Վահան Ավագյանը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՆՉ ԿՆԱԽԱՁԵՌՆԵՆ

Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիայից հետո Արցախի կառավարության անդամները եւ պատգամավորները տեղափոխվել են Հայաստան: Արցախի Հանրապետության կառավարությունը՝ նախագահ Սամվել Շահրամանյանի ղեկավարությամբ, իր գործառույթներն իրականացնում է ՀՀ-ում Արցախի ներկայացուցչությունում, որտեղ տարբեր հանդիպումներ է ունենում: Արցախի պատգամավորներն էլ իրենց հերթին են տարբեր շրջանակների հետ հանդիպումներ ունենում, առանց որեւէ իրական արդյունքի: Տպավորություն է, սակայն, որ արցախցի պաշտոնյաները եւ պատգամավորները ինչ-որ բանի են սպասում: «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է բարձրաձայնել, որ Արցախի կառավարությունը եւ պատգամավորները պետք է արտահերթ նիստ հրավիրեն եւ բարձրացնեն Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հարցը եւ պետությունը լուծարելու որոշումը չեղարկեն, որպեսզի միջազգային երաշխիքների պայմաններում հնարավոր լինի ապահովել արցախցիների անվտանգ վերադարձը հայրենիք: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի լուծարման փաստաթուղթը ստորագրած նախագահ Սամվել Շահրամանյանն է պատգամավորներին զսպում, որպեսզի նման բան չնախաձեռնեն, մինչեւ ինքը հանդիպի Նիկոլ Փաշինյանի հետ ու համաձայնեցնի իրենց քայլերը: Փաշինյանն էլ չի հանդիպում, քանի որ խուսափում է բարկացնել Ալիեւին: «Ժողովուրդ» օրաթերթը Արցախի անկախ պատգամավոր Կարեն Հովհաննիսյանից հետաքրքրվեց՝ ինչու պատգամավորները արտահերթ նիստ չեն հրավիրում, որպեսզի ինքնորոշման հարց բարձրացնեն: Մեր հարցին ի պատասխան՝ վերջինս ասաց, որ դեռ անվտանգային մի շարք հարցեր կան, որոնք պետք վերլուծեն, ինչից հետո նոր իրենց անելիքները կորոշեն. «Հիմա որոշակի խնդիրներ կան, շատ փակ թեմաներ կան, որոնք վերաբերում են անվտանգային հարցերին. մինչեւ այդ փակ թեմաները չքննարկվեն, չենք կարող քայլ անել: Մենք չպետք է վտանգենք ժողովրդի կյանքը: Իրավիճակը բազմակողմանի վերլուծելուց հետո միանշանակ կլինի համապատասխան հայտարարություն, հանրությունը տեղյակ կլինի մեր քայլերից: Այս պահին դեռ որոշակի թեմաներ կան, որոնք պետք է բազմակողմանի վերլուծության ենթարկել. շտապողականությունը լավ չէ»: Արդյոք Սամվել Շահրամանյանը որեւէ կերպ խոչընդոտո՞ւմ է նրանց այս հարցում. հարցին պատգամավորը պատասխանեց. «Կոնկրետ Սամվել Շահրամանյանը չի կարող ինչ-որ բան թույլ տալ կամ չտալ. ինքն ԱԺ-ի վրա որեւէ լիազորություն չունի, ընդհակառակը, ԱԺ-ն ունի լծակներ»: Ի դեպ, ուշագրավ է, որ Արցախի լուծարման փաստաթուղթը ստորագրած Սամվել Շահրամանյանը տարօրինակ լռություն է պահում: Մինչ փորձագիտական շրջանակները, ընդդիմադիրները պնդում են, որ նրա ստորագրած փաստաթուղթը իրավական որեւէ ուժ չունի, քանի որ ճնշման տակ է ստորագրվել, Շահրամանյանը խուսափում է խոսել ու պարզաբանում տալ՝ ի վերջո ինչ է ստորագրել: Կարեն Հովհաննիսյանից հետաքրքրվեցինք նաեւ՝ արդյոք Արցախի պատգամավորները՝ որպես քաղաքական բարձրագույն մարմնի ներկայացուցիչներ, պատրաստվում են հայտարարել, որ իրենք եւս Սամվել Շահրամանյանի ստորագրած փաստաթուղթն առոչինչ են համարում, քանի որ այն պարտադրանքի ներքո է ստորագրված: «Ես իմ հանրային խոսքում հայտարարել եմ, որ Արցախի Հանրապետությունը ձեւավորվել է համընդհանուր հանրաքվեի միջոցով, հետեւաբար որեւէ պաշտոնյայի կամքից երկրի՝ գոյություն ունենալը կամ չունենալը չի կարող կախված լինել: Ինչպես գիտենք, պետության երեք սյուները՝ գործադիր, օրենսդիր եւ դատական, իրարից անկախ են, եւ յուրաքանչյուրի գործառույթները հնարավոր է հակակշռել»,- ասաց Հովհաննիսյանը: Թե ինչ կնախաձեռնեն Արցախի պատգամավորները եւ վտարանդի կառավարությունը, կտեսնենք առաջիկայում, բայց մի բան հստակ է՝ ժամանակը մեր դեմ է աշխատում, եւ հապաղելը միայն վնասելու է քայլերի արդյունավետությունը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ստրասբուրգում Եվրախորհրդարանի լիագումար նիստում իր ելույթի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադարձավ Գրանադայի հայտարարության մեջ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղությանը եւ հարաբերությունների կարգավորմանը հասնելու համար սահմանների սահմանագծման թեմային:

Նա մեջբերեց Գրանադայի հայտարարությունից այդ հատվածը. «Նրանք ընդգծել են սահմանների սահմանազատման ուղղությամբ աշխատելու հրատապ անհրաժեշտությունը՝ հիմնվելով կողմերին տրամադրված ԽՍՀՄ Գլխավոր շտաբի վերջին քարտեզների վրա, որոնք պետք է նաեւ հիմք հանդիսանան ուժերի հետքաշման, խաղաղության պայմանագիրը վերջնական տեսքի բերելու եւ հումանիտար բոլոր խնդիրների լուծման համար»:

«Այս սկզբունքը ս/թ հուլիսի 15-ին Բրյուսելում ԵՄ խորհրդի նախագահի, Ադրբեջանի նախագահի եւ իմ մասնակցությամբ տեղի ունեցած եռակողմ հանդիպման արդյունքներով Շառլ Միշելն իր հայտարարության մեջ արտահայտել է այսպես (մեջբերում եմ). «Երկու առաջնորդները վերահաստատել են աներկբա նվիրվածությունը 1991 թվականի Ալմաթիի հռչակագրին՝ որպես սահմանների դելիմիտացիայի քաղաքական շրջանակ»:

Այս նույն սկզբունքը 2022 թվականի հոկտեմբերի 6-ի Պրահայի քառակողմ հանդիպման արդյունքներով արձանագրվել է հետեւյալ կերպ (մեջբերում եմ). «Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ 1991թ. Ալմաթիի Հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը: Նրանք հաստատեցին, որ դա հիմք կհանդիսանա սահմանազատման հարցերով հանձնաժողովների աշխատանքների համար»:

Այս սկզբունքի մասին պետք է իմանաք հետեւյալ լրացուցիչ տեղեկատվությունը: Ալմաթիի հռչակագիրը ստորագրել են Խորհրդային Միության 12 հանրապետությունները 1991 թվականի դեկտեմբերի 21-ին: Այդ հռչակագիրը քննարկվող հարցի համատեքստում արել է հետեւյալ երկու կարեւոր արձանագրումները.

Խորհրդային միությունը դադարում է գոյություն ունենալ:

Հանրապետությունները ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, գոյություն ունեցող, այսինքն՝ վարչական սահմանների անխախտելիությունը, եւ, հետեւաբար, Խորհրդային Միության հանրապետությունների միջեւ գոյություն ունեցած վարչական սահմանները դառնում են պետական սահմաններ:

Ադրբեջանը հայտարարում է, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահման չկա, ինչը հակասում է Ալմաթիի հռչակագրին եւ վերը նշված պայմանավորվածություններին: Ադրբեջանը նաեւ երկիմաստություններ է պահում Խորհրդային Միության վերջին քարտեզները որպես դելիմիտացիայի հիմք ընդունելու հարցում, ինչը նույնպես որոշ փորձագետների հիմք է տալիս ենթադրելու, թե Ադրբեջանը Հայաստանի դեմ տարածքային պահանջներ ներկայացնելու եւ նոր ռազմական ագրեսիա նախաձեռնելու հիմքեր է ստեղծում»,- հայտարարեց Փաշինայանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՍԵՆԱՏՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Ֆրանսիայի Հանրապետության Սենատի անդամ, Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի բաղմակողմ կոմիտեի ղեկավար Քրիստոֆ-Անդրե Ֆրասսայի եւ Սենատի մեկ այլ անդամ Ղոնան լը Գլյոյի հետ քննարկեցինք, թե ինչպես են ռուս-ուկրաինական, ապա նաեւ Իսրայելա-պաղեստինյան պատերազմների բռնկման ֆոնին խախտվում Հարավային Կովկասում բնակվող հայերի իրավունքները:

Արցախի Հանրապետությունն էթնիկ զտման ենթարկվեց Ադրբեջանի կողմից ս.թ. սեպտեմբերի 19-ի 24-ժամյա զինված ագրեսիայի ընթացքում, որի հետեւանքով տեղաբնիկները 3 օրում դուրս եկան իրենց պատմական հայրենիքից ու հիմա վտարանդի են...

Ընդգծեցի, որ Արցախի Հանրապետության նախագահը երկրի լուծարման մասին հրամանագիրը ստորագրել է ճնշման տակ, իսկ միջազգային կոնվենցիաներով հստակ սահմանումներ կան, որ ճնշման, ահաբեկման ներքո ստորագրված փաստաթուղթն իրավազորություն չունի, հետեւաբար Արցախի Հանրապետությունը գոյություն ունի եւ պիտի ունենա:

Իմ խոսքում նշեցի, որ Արցախի Հանրապետության՝ լեգիտիմ ճանապարհով ձեւավորված կառավարությունն ու Ազգային ժողովը պետք է նիստեր անցկացնեն, բարձրացնեն Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հարցը, որպեսզի հնարավոր լինի միջազգային երաշխիքների պայմաններում ապահովել արցախցիների անվտանգ վերադարձը հայրենիք: Կոսովոյի ինքնորոշման նախադեպը պետք է տարածվի նաեւ Արցախի վրա:

Գործընկերներիս ներկայացրի, որ Հայաստանի Հանրապետությունն էլ վտանգված է, եւ չի բացառվում, որ Արցախի Հանրապետության ճակատագիրը կսպառնա նաեւ Հայաստանին եւ հայ ժողովրդի հայաստանաբնակ հատվածին, եթե միջազգային դատարանների որոշումները մնան անկատար:

Ադրբեջանն իր ծավալապաշտական նկրտումները չի դադարեցնում եւ օկուպացրած է պահում Հայաստանի 3 մարզերից մոտ 140 կիլոմետր քառակուսի տարածք: Թուրքիան եւ Ադրբեջանը, ի թիվս այլնի, Սյունիքով արտատարածքային միջանցք են պահանջում:

Այս առումով Արցախի եւ ՀՀ ինքնիշխանության պահպանմանն ուղղված Ֆրանսիայի ջանքերը շատ կարեւոր են:

Այս համատեքստում շեշտեցի, որ միջազգային դիտորդների ներկայությունն Արցախում օր առաջ իրավիճակ կփոխի: Խնդրեցի գործադրել ջանքեր այդ ուղղությամբ:

Որպես ընդդիմություն՝ ընդգծեցի, որ Ֆրանսիայից ավելի հաճախ ենք հայամետ դիրքորոշումներ լսում, քան ՀՀ իշխանություններից:

Իհարկե, շոշափեցինք նաեւ ինձ համար ամենազգայուն թեմաները՝ 2020 թվականի արցախյան 44-օրյա պատերազմից հետո գերեվարված եւ անհետ կորած մեր հայրենակիցների վերադարձի ու Ադրբեջանի կողմից վերջիններիս որոնողական աշխատանքների ապօրինի դադարեցման, ինչպես նաեւ 9-ամսյա շրջափակումից հետո գերեվարված քաղաքացիների ու պետական պաշտոնյաների շուտափույթ վերադարձի ջանքերին ուղղված հարցերը:

Գործընկերներս հայտնեցին, որ արդեն ընդունվել է Ֆրանսիայի Սենատի կողմից կոշտ հայտարարություն, որտեղ խոսվում է Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին, ինչի համար Ֆրանսիայի սենատի մի շարք անդամներ արդեն իսկ թիրախավորվում են Ադրբեջանի կողմից: Սենատորները, սակայն, հետ չեն կանգնի եւ չեն դադարի բարձրացնել ճշմարտությունը:

Պարոն Ֆրասսան տեղեկացրեց ինձ, որ Ֆրանսիայի վարչապետը, ի պատասխան սենատորների հարցերին, ընդգծել է, որ Ֆրանսիան Հայաստանին զենք կտրամադրի, որպեսզի ապահովի իր բնակչության անվտանգությունը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՏԱՐԻՆԵՐ ԿՏԵՎԻ

Զանվածային թաղման վայրերում հայտնաբերված անձանց նույնականացումը կարող է 10 տարի տեւել: Ինչպես տեղեկացրել է APA-ն, այս մասին հայտարարել է ԿԽՄԿ դատաբժշկական քննության հարցերի գծով համակարգող Էլիֆ Գյունչե Էսքիքյոյը Բաքվի մամուլի ասուլիսում:

Նրա խոսքով՝ այդ գործընթացը շատ ժամանակ է պահանջում: «Մարդու դիակը հանելը կհեշտացնի լաբորատոր աշխատանքները: ԴՆԹ ոչ մի անալիզ չի կարող 100-տոկոսանոց արդյունք տալ: Եթե կմախքը հանվել է ամբողջությամբ, արդյունք կարելի է ստանալ երկու նմուշ վերցնելով: Լաբորատոր հետազոտությունները կարող են շատ ժամանակ տեւել, եթե հայտնաբերվել է կմախքի մի մասը»:

Փորձագետի կարծիքը խիստ տարբերվում է ադրբեջանական կողմի գործողություններից. Արցախում հայտնաբերված յուրաքանչյուր թաղատեղի եւ հարակից տարածք Ադրբեջանի իշխանությունները հռչակում են «հայերի կողմից սպանված ադրբեջանցիների թաղման վայրեր». դա արվում է առանց փորձաքննության եւ կրում է քարոզչական նպատակ:

ԱԼԻԵՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է, թե ղարաբաղյան հակամարտության թեման ամբողջովին փակ է: Նա մեկնել է Ֆիզուլիի շրջան, այնտեղ հանդիպում ունեցել եւ հայտարարել, թե դա շատ մեծ ուրախություն է:

Նա այնտեղ է մեկնել՝ «Ֆիզուլի քաղաքի օրը» նշելու համար:

«Մեր «Մեծ վերադարձ» ծրագրի առաջին փուլի իրականացման արդյունքներով՝ 2026 թվականի վերջին Ֆիզուլիի շրջանում կբնակվի 22 հազար մարդ, իսկ Ղարաբաղում եւ, ընդհանուր առմամբ, Արեւելյան Զանգեզուրում՝ 140 հազար մարդ», - նշել է նա:

ՄԱԿՐՈՆԻ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը մտադիր է այցելել Իսրայել:

«Ես աջակցում եմ Իսրայելի ինքնապաշտպանության իրավունքը, սակայն դա միշտ պետք է համատեղելի լինի միջազգային իրավունքի, մարդասիրական իրավունքի հետ», - ասել է Մակրոնը:

Նա ասել է, որ ցանկանում է մոտ ժամանակներս մեկնել Իսրայել, սակայն այցի ժամկետ չի նշել:

Նշենք, որ Իսրայելի եւ Գազայի հատվածի միջեւ պատերազմի սկզբից ի վեր մի շարք առաջնորդներ այցելել են Թել Ավիվ, այդ թվում՝ ԵՀ ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լեյեն, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը, իսկ վաղը այնտեղ կժամանի նաեւ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը:

ՄԱՀԱՓՈՐՁ

ՓՈՐՁԵԼ Է ԽԵՂԴԵԼ ՀՈՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Անդրանիկ Վլադիմիրի Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2023 թվականի հունիսի 15-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, անկողնային հիվանդ վիճակում գտնվող հորը՝ Վլադիմիր Պետրոսյանին խեղդելու եղանակով կյանքից զրկելու դիտավորությամբ բարձը դրել է նրա դեմքին եւ փորձել է խեղդել նրան՝ միաժամանակ բղավելով. «Մեռի, դուք բոլորդ պետք է մեռնեք»: Սակայն իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել, քանի որ նույն պահին Վլադիմիր Պետրոսյանի ննջասենյակ է մտել թոռնիկը՝ Արթուր Առաքելյանը, որը հանդիսանում է նաեւ Անդրանիկ Պետրոսյանի քրոջ որդին, եւ անմիջապես մոտենալով Անդրանիկ Պետրոսյանին՝ երկու ձեռքերով թիկունքից քաշել է մի կողմ, ձեռքից վերցրել բարձը, որից հետո սկսել են քաշքշել միմյանց: Այդ ժամանակ ննջասենյակ են մտել նաեւ Միլանյա Առաքելյանը եւ Ամալյա Պետրոսյանը:



Անդրանիկ Պետրոսյանը կոտրել է խոհանոցի դռան ապակին եւ բռունցքով մեկ անգամ հարվածել Արթուր Առաքելյանի ճակատի հատվածին, այնուհետեւ նրան հաջողվել է քեռուն տանից դուրս հանել, ինչի արդյունքում Անդրանիկ Պետրոսյանին չի հաջողվել իրագործել իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը:

Բացի այդ, նշված միջադեպից մոտ 5 րոպե անց, արծաթափայլ դանակը վերցնելով իր աջ ձեռքը, Արթուր Առաքելյանի կողմից նրա չիրագործած դիտավորության խոչընդոտումն օգտագործելով որպես վրեժի շարժառիթ, տան մուտքի աստիճանների վրայով թռչել է, այնուհետեւ վազելով՝ մոտեցել է տան ավտոտնակում գտնվող Արթուր Առաքելյանին եւ այս անգամ իր համար իմաստավորված եւ նպատակային գործողություններով որպես թիրախ է ընտրել իր հակաբարոյական գործողություններին արձագանքած Արթուր Առաքելյանին ու նրան ապօրինի կյանքից զրկելու դիտավորությամբ մեկ անգամ նախապես հարմարեցված կտրող-ծակող առարկայի՝ դանակի գործադրմամբ հարվածել է նրա կենսական կարեւոր օրգանին՝ կրծքավանդակի հատվածին՝ միաժամանակ նրա հասցեին տալով սպանության սպառնալիքներ:

Երբ փորձել է կրկին հարվածներ հասցնել Արթուր Առաքելյանի մարմնի տարբեր հատվածներին՝ իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը ավարտին հասցնելու նպատակով, Արթուր Առաքելյանը դիմադրել է, բռնել եւ ամուր սեղմել է նրա աջ ձեռքը, պառկեցրել է ավտոտնակում գտնվող սեղանի վրա: Այդ ժամանակ Արթուր Առաքելյանին օգնության է հասել նաեւ մայրը՝ Միլանյա Առաքելյանը, որը կրկին բռնել է Անդրանիկ Պետրոսյանի աջ ձեռքը, սեղմել այն վերջինիս վնասազերծելու նպատակով, սակայն Անդրանիկ Պետրոսյանը իր դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն ավարտին հասցնելու նպատակով կրկին բաց չի թողել դանակը:

Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց Արթուր Առաքելյանի շարունակական ուժի գործադրման արդյունքում հաջողվել է վնասազերծել Անդրանիկ Պետրոսյանին եւ նրա ձեռքից խլել դանակը, ինչի արդյունքում Անդրանիկ Պետրոսյանը հեռացել է դեպի տուն եւ իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել իրագործել իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է ԵՂԲՈՐԸ

Հոկտեմբերի 15-ին՝ ժամը 01:50-ին, «Վանաձոր» բժշկական կենտրոնից ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզի օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ Շտապօգնության խումբը «որովայնի շրջանի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վերք» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխել Չարեքտար գյուղի 40-ամյա բնակչի:

Ոստիկանությունից հայտնում են, որ, ըստ բժշկի տեղեկանքի, նա ի վիճակի չէ բացատրություն տալու:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ժամը 04.10-ին, մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով, ՊԾ Լոռու մարզի պարեկները ոստիկանության Գուգարքի բաժին են տեղափոխել 40-ամյա տղամարդու 27-ամյա եղբորը: Բացատրական աշխատանքի շնորհիվ՝ նա հայտնել է, որ ինքն է դանակով խփել եղբորը: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է ծալովի դանակ:

27-ամյա երիտասարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Լոռու մարզի քննչական վարչություն:

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ

Ոստիկանության Վարդենիսի բաժնի քրեական հետախուզության ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Վարդենիսի բնակիչ, 23-ամյա մի երիտասարդ ապօրինի կանեփ է աճեցնում, պատրաստած թմրանյութն էլ իրացնում է համագյուղացիներին:

Ոստիկանությունից հայտնում են, որ դեպքի առթիվ նախաձեռնվեց քրեական վարույթ: Ստացված տեղեկություններն իրացնելով՝ ՆԳՆ քրեական ոստիկանության գլխավոր վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի եւ Գեղարքունիքի մարզային վարչությունների, Վարդենիսի բաժնի ծառայողների եւ Վարդենիսի քննչական բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հոկտեմբերի 2-ին խուզարկվեց 23-ամյա վարդենիսցու փաստացի բնակության վայրը՝ իր օժանդակ շինություններով, եւ Սոթքում գտնվող նրա առանձնատունն ու կից շինությունները: Փաստացի բնակության վայրից հայտնաբերվեց ընդհանուր 160 գրամից ավելի, իսկ Սոթքի առանձնատնից՝ 570 գրամից ավելի մարիխուանայի նմանվող զանգված:

Երիտասարդը հայտնել է, որ հայտնաբերվածը թմրանյութ է, որի հումք կանեփն ինքն է աճեցրել: Հաստատվեց նաեւ երեք համագյուղացիներին թմրանյութ իրացնելու տեղեկությունը:

Նույն օրը երիտասարդը ձերբակալվեց եւ տեղափոխվեց ոստիկանության Վարդենիսի բաժին, իսկ հոկտեմբերի 3-ին նրան մեղադրանք առաջադրվեց. խափանման միջոց ընտրվեց կալանքը:

Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

ԿԱՐԵՎՈՐ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱԼԱՎԵՐԴԻՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հոկտեմբերի 16-ին սպանություն է տեղի ունեցել Ալավերդիում:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Աքորի գյուղի 2-րդ փողոցում խափանվել է Արթուր Սիմոնյանի մեքենան ու ճանապարհային երթեւեկության համար խոչընդոտներ ստեղծել: Մյուս համագյուղացի Արտակ Սիմոնյանն Արթուրի հասցեին հնչեցրել է հայհոյանքներ, ու սկսվել է վիճաբանություն:

Վիճաբանության ժամանակ Արթուրի որդին՝ Դավիթը, դանակով հարվածել է Արտակ Սիմոնյանին: Ստացած հարվածներից Արտակ Սիմոնյանը մահացել է:

Դեպքի վայր են շտապել իրավապահները: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ Դավիթը ձերբակալվել է, իսկ նրա հորը՝ Արթուրին, բաց են թողել: Իրավապահները փնտրում են դանակը, որով կյանքից զրկել են Արտակ Սիմոնյանին:

Ի դեպ, Ալավերդիում տարածված լուրերի համաձայն՝ սպանված Արտակ Սիմոնյանը եւ Արթուր, Դավիթ Սիմոնյանները հոր հորեղբոր որդիներ են:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ՝ «ՋԱՏԻԿՈՒՄ»

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ «Ջատիկ» երեխաների աջակցման կենտոնում հոկտեմբերի 6-ին ուշագրավ դեպք է տեղի ունեցել:

Հոկտեմբերի 6-ին Ավանի հոգեկան առողջության կենտրոն բուժօգնության է դիմել 15-ամյա Ն. Բաբայանը: Բուժանձնակազմի պնդմամբ՝ երեխայի մոտ նախնական ախտորոշմամբ «սուր հալյուցինատոր համախտանիշ» է արձանագրվել: Երեխան պնդել է, որ իր հանդեպ բռնություն են գործադրել եւ սեռական բնույթի գործողություն կատարել: Փաստացի երեխան նշել է այն անձանց անունները, որոնք իրեն ոչ միայն բռնության են ենթարկել, այլ նաեւ սեռական բնույթի գործողություններ կատարել:

«Ժողովուրդ» օրաթերթը դեպքի մասին առավել մանրամասն տեղեկություններ ստանալու նպատակով փորձեց կապ հաստատել «Ջատիկ» երեխաների աջակցման կենտրոնի տնօրեն Կարինե Գասպարյանի հետ, սակայն ոչ մի կերպ չկարողացանք կապ հաստատել, քանի որ մեր զանգերը մնացին անպատասխան, իսկ հետո տիկին Գասպարյանի բջջային հեռախոսահամարը դարձավ անհասանելի:

Հավելենք, որ «Ջատիկ» երեխաների աջակցման կենտրոնի տնօրենի հետ փորձել ենք կապ հաստատել՝ զանգահարելով կենտրոնի ադմինիստրացիայի բաժին: Նշենք, որ կենտրոնը առհասարակ չի պատասխանում ոչ մի հեռախոսազանգի:

Հիշեցնենք, որ առավել մանրամասն տեղեկություններ դեպքի առթիվ արդեն հրապարակել էինք եւ նշել այն տղաների անունները, որոնք, երեխային ենթարկելով բռնության, սեքսուալ բնույթի գործողություններ են կատարել:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 16-ից 17-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 66 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՉԻՆՉ ՉԻ՞ ԿԱՏԱՐՎԵԼ

Դիլիջանի համայնքը ներառում է համանուն քաղաքը եւ 6 գյուղեր: Այդ խոշոր համայնքում վերջին երկու ամսում ոչ մի իրադարձություն չի՞ կատարվել: Այդ հարցն է առաջանում, երբ բացում ես Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը: Այնտեղ վերջին լուրը տեղադրվել է օգոստոսի 29-ին. այն Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքից փոխառնված նյութ է Տավուշի մարզում անտառային եւ բուսածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի հետ մարզպետի հանդիպման մասին: Ի դեպ, Տավուշի մարզպետն այդ խումբն արդեն լուծարել է: Դրանից առաջ՝ օգոստոսի 17-ին, վերոհիշյալ կայքում տեղադրվել է տեղեկատվություն այն մասին, որ օգոստոսի 16-ին Դիլիջանի համայնքապետարանի կողմից Դիլիջանում հյուրընկալվել էր շախմատի գրոսմայստեր, Ռուսաստանի սպորտի վարպետ Դավիթ Պառավյանը: Դիլիջան համայնքի ղեկավարն է Դիլիջանի քոլեջի շրջանավարտ, անձնական գործում իր սեռը «արու» գրած, ՔՊ կուսակցության Դիլիջանի կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը:

ՎԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆ

Անհայտ անձը կամ անձինք հերթական անգամ ջարդել, կոտրել են Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքի Մայիսի 28-ի փողոցի բազում եղեւնիներ: Իջեւանի համայնքապետարանն այդ առթիվ հայտարարություն է տարածել, ուր ասվում է. «Խնդրում եւ զգուշացնում ենք զերծ մնալ նմանատիպ գործողություններից: Այսպիսի ցանկացած դրսեւորում արժանի է հանրային պարսավանքի, դատապարտելի է եւ քրեորեն պատժելի»:

ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԿԿԱՅԱՆԱ

Բերդի համայնքապետարանը հայտնում է, որ հոկտեմբերի 26-ին՝ ժամը 16:00-ին, Բերդ քաղաքի Ժիրայր Անանյանի անվան մշակույթի տանը կկայանա հանրային բաց քննարկում: «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է «Վալլեքս գրուպ» ընկերությունների խմբի անդամ, մտադիր է Բերդ խոշոր համայնքի վարչական սահմաններում գտնվող Տավուշ-Խնձորուտ հանքային դաշտի տարածքում գտնվող օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնել: Հանրային քննարկման նպատակն է բացահայտել այդ թեմայի շուրջ հանրային կարծիքները, արձանագրել շահագրգիռ հանրության առաջարկություններն ու դիտողությունները: Այդ թեմայով հանրային քննարկումը նախատեսված էր սեպտեմբերի 28-ին, սակայն «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ տնօրինությունը, նկատի ունենալով Արցախից Հայաստան բնակչության զանգվածային բռնագաղթը, որոշել էր հետաձգել հանրային քննարկումը: Բերդ համայնքի բնակիչների մեծամասնությունը բացասաբար է վերաբերվում նշված տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելուն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆ ԹԱՓՈՒՐ ՄՆԱՑԱԾ ՀԱՍՏԻՔՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԿԳՄՍ նախարարության կողմից հավաքագրվել են ՀՀ մարզերում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա ուսուցիչների թափուր հաստիքները, որոնք զբաղեցնելու համար Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչները կարող են դիմել արտամրցութային կարգով:

Ինչպես ավելի վաղ հայտնել էինք, արդեն գործարկվել է ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության հարթակը, որտեղ, ըստ քայլերի հաջորդականության, ներկայացված է, թե ուսուցիչները ինչպես պետք է ՀՀ մարզեր ուսուցիչների գործուղման համակարգում գրանցվեն եւ հայտ ներկայացնեն: Հարթակի գործարկման պահին ուսուցիչների թափուր հաստիքների թիվը կազմել է 1422. հոկտեմբերի 17-ի դրությամբ այդ թիվը նվազել է (1385):

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի խոսքով՝ թափուր հաստիքներ են առկա գրեթե բոլոր առարկաներից:

«Մենք մշտապես խոսում ենք այն մասին, որ բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների մեծ բաց ունենք, բայց դատելով հավաքագրված բազայից՝ այնպես չէ, որ միայն բնագիտական առարկաներից են թափուր հաստիքները: Գրեթե բոլոր առարկաների մասով առկա են թափուր հաստիքներ, եւ բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչներն էլ հնարավորություն կունենան ընտրելու իրենց մասնագիտությանը համապատասխան աշխատանք: Իհարկե, կան թափուր հաստիքներ, որտեղ դասաժամերի քանակը քիչ է, բայց ԿՏԱԿ-ի հարթակում տեղադրված է մանրամասն տեղեկատվություն, թե որ դպրոցում որ առարկայից կա թափուր հաստիք, քանի դասաժամով, եւ որքան կկազմի աշխատավարձը տվյալ ժամաքանակով աշխատելու պարագայում: Դիմողը կարող է ուսումնասիրել ու հասկանալ՝ իրեն որքանով է հարմար այդ աշխատանքը»,- պարզաբանում է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Արաքսիա Սվաջյանի տեղեկացմամբ՝ նախարարությունը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված շուրջ 400 ուսուցիչներից դիմումներ է ստացել, հավաքագրվել են նրանց տվյալները, եւ ստեղծվել է բազա. «Մեր ունեցած տեղեկություններով՝ ԼՂ-ում աշխատում էին շուրջ 1500 ուսուցիչներ: Ունենք տեղեկատվություն, որ հանրապետության տարբեր մարզերում շուրջ 100 ուսուցիչներ նախքան օժանդակության ծրագրի հաստատումը իրենց նախաձեռնությամբ արդեն դիմել էին իրենց բնակավայրերի դպրոցներ եւ անցել աշխատանքի»:

Արաքսիա Սվաջյանը տեղեկացրել է նաեւ, որ հանրապետության բոլոր մարզերի դպրոցներում աշխատանքի անցնելիս ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչները կստանան 30 տոկոս հավելավճար, իսկ որոշ մարզերի՝ Սյունիքի, Վայոց ձորի հանրակրթական ուսհաստատություններում, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ եւ Վարդենիս համայնքներում, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջեւան եւ Բերդ համայնքներում աշխատանքի անցնելու դեպքում, 30 տոկոս հավելավճարից բացի, կունենան նաեւ ամենամսյա 50 հազար դրամ լրավճար:

Հիշեցնենք՝ 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագրի շահառու է հանդիսանում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման հետեւանքով Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատած եւ «Հանրակրթության մասին» օրենքի պահանջներին համապատասխանող այն անձը, որը ցանկություն ունի աշխատելու ՀՀ մարզերի բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում որեւէ առարկայից ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում, սահմանված կարգով, ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին դիմող չլինելու կամ մրցույթը չկայանալու պարագայում ծրագրի շահառու հանդիսացող անձինք կարող են ներգրավվել այդ հաստատություններում՝ որպես ուսուցիչ:

Այս սկզբունքով շահառուների պայմանագրի ժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման պահից մինչեւ 2-րդ ուսումնական տարվա ավարտը: Եթե շահառուն երկու անգամ չեղարկում է ներկայացված դիմումը, նա այլեւս առաջնահերթության իրավունք չի ունենում: Ընդ որում՝ ծրագրի շրջանակում կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում տվյալ ուսուցիչը զրկվում է ծրագրից կրկին օգտվելու իրավունքից:

ԱՇԽԱՐՀ

ԱՄՓՈՓՈՒՄ՝ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Իսրայելական կործանիչները հարվածներ են հասցրել պաղեստինյան «Համաս» շարժման շտաբին. հայտնում է Իսրայելի պաշտպանության բանակը:

«Գիշերը Իսրայելի պաշտպանության ուժերը հարձակվել են «Համաս» եւ «Ջիհադ» ահաբեկչական կազմակերպություններին պատկանող ռազմական օբյեկտների վրա: Իսրայելի պաշտպանության բանակի մարտիկները հարվածներ են հասցրել «Համաս» ահաբեկչական կազմակերպության շտաբին եւ սպանել «Համաս»-ի ռազմական գործակալին»,- ասվում է իսրայելական բանակի Telegram ալիքում:

«Թուրքիան հանդես կգա որպես Պաղեստինի երաշխավոր երկիր, եթե Իսրայելի հետ խաղաղ համաձայնագիր ձեռք բերվի»,- հայտարարել է այդ երկրի արտգործնախարար Հաքան Ֆիդանը:

Ֆիդանը ավելի վաղ հայտնել էր, որ Անկարան առաջ է քաշել իսրայելա-պաղեստինյան սրացման կողմերի համար երաշխավորների համակարգի ստեղծման գաղափարը: Միաժամանակ Թուրքիայի ԱԳՆ ղեկավարը ընդգծել է, որ այն երկրները, որոնք հանդես կգան որպես երաշխավոր հատկապես Պաղեստինի համար, պետք է լինեն Մերձավոր Արեւելքի տարածաշրջանից:

«Դա վերաբերում է նաեւ Թուրքիային: Իսրայելի համար պետք է երաշխավոր լինեն այլ երկրներ: Երկու կողմերին հարմար պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո երաշխավոր երկրները պետք է պատասխանատվություն ստանձնեն դրա պահանջների կատարման համար: Միայն այդկերպ կարելի է հասնել կայուն խաղաղության»,-մեջբերում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 7-ին «Համաս»-ի ավելի քան 1500 զինյալներ ճեղքել էին անվտանգության պատնեշը եւ Գազայի հատվածից ներխուժել Իսրայել: Իսրայելը պատերազմ է հայտարարել «Համաս»-ին եւ հարվածներ է հասցնում հարյուրավոր թիրախների: Իսրայելը նաեւ Գազայի լիակատար պաշարում է սկսել՝ դադարեցնելով ջրի, էլեկտրաէներգիայի, վառելիքի, սննդի եւ այլ ապրանքների մուտքը:

Իսրայելում զոհերի թիվը գերազանցել է 1400-ը: 150 մարդ պատանդ է վերցվել «Համաս»-ի կողմից: Գազայի հատվածում զոհերի թիվը հասել է 2700-ի:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 10-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԱՌՕՐՅԱ

ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍՎԵՑ

Արցախից քաղաքացիների բռնի տեղահանումից հետո Հայաստանում սկսվել է դպրոցականներին ուսումնական գործընթացներին ընդգրկելու գործընթացը: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ԿԳՄՍ նախարարություն՝ տեղեկանալու համար, թե որքան աշակերտներ են արդեն տեղավորվել դպրոցներում:

Նախարարությունից մեզ պատասխանեցին. «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված աշակերտներից շուրջ 14.000-ն արդեն ընդգրկվել են ուսումնական հաստատություններում: Գույքագրման փուլում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների դասագրքերի պահանջը, որից հետո սահմանված կարգով դպրոցականները կապահովվեն դասագրքերով:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը կիրականացվի՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 12-ի «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին» N 1756-L որոշման»:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ՝ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 16-ին Wildberries միջազգային առցանց հարթակը սկսել է գումարի վերադարձ վաճառողներին այն դեպքում, եթե նրանց ապրանքները փոխարինվել են:

Առցանց հարթակի գործընկերները ստիպված չեն լինի որեւէ քայլ ձեռնարկել դրա համար: Wildberries-ի աշխատակիցներն իրենք տեղեկատվություն կհավաքեն ապրանքների տեղաշարժի բոլոր փուլերում:

Վաճառողը ետ կստանա ապրանքի արժեքը՝ փոխարինումը հայտնաբերման օրվա ընթացիկ գնով, առանց հաշվի առնելու մշտական հաճախորդի զեղչը, հաշվարկվելու է նաեւ միջնորդավճարը: Այս գումարը կարտացոլվի ֆինանսական հաշվետվությունում՝ որպես «փոխարինված ապրանքների փոխհատուցում»: Ապրանքները չեն վերադարձվի վաճառողին, գումարը կնստացվի հաշվեկշռին փոխարինումը հայտնաբերելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

Այս ժամանակահատվածն անհրաժեշտ է Wildberries-ի մասնագետների կողմից մանրակրկիտ հետաքննության համար:

«Մենք մշտական երկխոսության մեջ ենք մեր գործընկերների հետ, միասին քննարկում ենք նրանց հետ համագործակցության պայմանները: Հետեւաբար, թարմացրել ենք փոխարինումների հետ աշխատելու կանոնները. ցանկանում ենք պահպանել համագործակցության թափանցիկությունը»,- նշել են Wildberries-ի մամուլի ծառայությունից:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՏՐԱՄԱԴՐՎԵԼ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 80 հազար անձի արդեն վճարվել է ՀՀ կառավարության կողմից նախատեսված միանվագ դրամական աջակցության գումարը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին «Հումանիտար կենտրոն»-ում ասուլիսի ժամանակ ասել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը:

«Թեպետ նախորդ շաբաթ նախատեսված էր, որ այդ վճարումը պետք է իրականացվեր շուրջ 60 հազար մարդու, բայց տվյալների նույնականացումը ավելի արագ տեղի ունեցավ, եւ մենք կարողացանք 80 հազար մարդու վճարել»,-հավելել է նախարարը:

Նրա խոսքով՝ ԼՂ-ից բռնի տեղահանված երեխաներին եւս 100 հազար դրամի չափով միանվագ դրամական աջակցություն տրամադրելու համար ստացվել է շուրջ 27 հազար 300 դիմում:

«Նախորդ շաբաթ արդեն իսկ կարողացել ենք վճարել 14 հազար 593 երեխայի համար: Այս պահի դրությամբ մնացած դիմումները գտնվում են մշակման փուլում, եւ առաջիկա օրերին կկարողանանք նաեւ նրանց վճարել»,-մանրամասնել է Մկրտչյանը՝ նշելով, որ կվճարվի ԼՂ-ի բռնի տեղահանված այն բոլոր հայրենակիցների միանվագ դրամական աջակցությունը, որոնք չունեին բանկային քարտեր:

Գերատեսչության ղեկավարի տեղեկատվությամբ՝ նախորդ վճարման ընթացքում վճարվել է ավելի քան 4000 նոր քարտապանների: Նոր տվյալները Կենտրոնական բանկից ստանալուն պես շաբաթական կտրվածքով կիրականացվի տվյալների մշակումը, որից հետո՝ նաեւ վճարումը:

Հիշեցնենք, որ Արցախից բռնի տեղահանված անձանց կտրամադրվի վեցամսյա սոցիալական աջակցություն՝ 40 հազարական դրամ, ժամանակավոր կացարաններում բնակվելու, եւ 10 հազարական դրամ՝ կոմունալ ծախսերի վճարման համար. նախագիծ Կառավարության նիստում հավանության էր արժանացել:

Աջակցությունը կտրամադրվի ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների չափահաս եւ անչափահաս անդամներին, բացառությամբ՝

- եթե դիմողը բացակայում է ՀՀ-ից,
- բնակչության պետական ռեգիստրում ՀՀ-ում հաշվառված անձ է:

Տեղահանված այն անձինք, որոնք ՀՀ-ում ունեն բնակելի անշարժ գույք, ժամանակավոր կացարաններում բնակվելու համար նախատեսված 40 հազար դրամ աջակցության շահառու չեն հանդիսանա, սակայն վերջիններս կկարողանան օգտվել կոմունալ վճարների համար նախատեսված 10 հազարական դրամներից:

Գումարը կփոխանցվի շահառուների բանկային հաշիվներին կամ կտրամադրվի առձեռն Հայփոստի միջոցով այն դեպքում, եթե շահառուի տարիքը 75-ից բարձր է, կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ է եւ չունի բանկային հաշվեհամար:

Նոյեմբեր ամսից աջակցությունը չի վերաբերի՝

- բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում ժամանակավոր բնակվող անձանց,
- պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում ժամանակավոր բնակվող անձանց:

Սկսած նոյեմբերից՝ աջակցությունը կտրամադրվի՝ մեկ անգամ ներկայացվող առցանց դիմումների հիման վրա, որի ընթացակարգը կներկայացվի լրացուցիչ:

«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ»

ՀԱՍԱՆԵԼԻ Է ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Converse Mobile հավելվածի գործիքակազմը համալրվել է եւս մեկով՝ «Կարաս» համալրվող ավանդի ներդրման հնարավորությամբ:

«Սա հիանալի լուծում է այն հաճախորդների համար, որոնք մտադիր են խնայողություններ կուտակել աստիճանաբար՝ եկամտից մասհանումների միջոցով: Առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ է հավելվածում մուտք գործել «Հայտեր» բաժին, ապա անցնել «Ներդնել ավանդ», ընտրել ավանդատեսակը՝ «Կարաս», եւ լրացնել անհրաժեշտ դաշտերը»,- ասել են բանկում:

Ներդրում հնարավոր է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ ԱՄՆ դոլարով 6 ամիս, 1 տարի, 18 ամիս, 2 տարի ժամկետով: Նվազագույն գումարը 10.000 ՀՀ դրամն է կամ 100 ԱՄՆ դոլարը: ՀՀ դրամով ավանդի տարեկան պարզ տոկոսադրույքը մինչեւ 10% է, իսկ ԱՄՆ դոլարով ավանդինը՝ մինչեւ 3.40%: Տոկոսագումարը հաշվեգրվում է մայր գումարին: Սահմանված է մայր գումարի մասնակի նվազեցման հնարավորություն:

Converse Mobile հավելվածի զարգացմամբ «Կոնվերսբանկ»-ը մտադիր է ստեղծել թվային միջավայր տարբեր ֆինանսական կարիքներ, պահանջներ եւ հնարավորություններ ունեցող անձանց համար՝ նրանց առաջարկելով բանկային ծառայությունների համապարփակ գործիքակազմ: Վերջին ամիսներին էապես մեծացվել են հավելվածով վճարումների հնարավորությունները, իսկ առաջիկայում կներդրվեն նոր, այդ թվում՝ աննախադեպ հնարավորություններ:

Նշենք, որ Converse Mobile հավելվածում ներկայում առկա են հետեւյալ հնարավորությունները՝ հաշիվների կառավարում, փոխանցումներ Հայաստանում եւ արտերկիր, վճարումների լայն գործիքակազմ, վարկավորում, ներդրումներ, քարտերի պատվեր եւ այլն:

Բանկը վերահսկվում է ԿԲ կողմից:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵՑ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչներն անհատ ձեռնարկատեր Գարեգին Անդրեասյանին պատկանող հանրային սննդի օբյեկտում իրականացրած ստուգման ընթացքում պարզել են, որ այն գործում է իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներով (Կոտայքի մարզ, Երեւան-Սեւան մայրուղի):

Մասնավորապես՝

- սննդի կառույցի հատակը, պատերը, առաստաղները եւ խոհանոցի դուռը չեն ունեցել հարթ մակերես, անջրանցիկ, չներծծվող շերտը եղել է վնասված, չի կանխարգելվել կեղտի կուտակումը, մասնիկների թափվելու հնարավորությունը,
- աշխատանքային մակերեւույթները, դարակաշարերը եւ աշխատասեղանները՝ ներառյալ սարքավորումների եւ հատկապես սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվողները, կառուցված են եղել հիգիենայի պահանջները չբավարարող նյութերից,
- չի իրականացվել սննդամթերքի արտադրության գործընթացում օգտագործվող արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման եւ կրծողների ոչնչացման գործընթացների պարբերականությունը:

Հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է ժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՆԱԽԱԳԾԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հոկտեմբերի 16-ից եթերում կհայտնվի Ինննա Խոջամիրյանի եւ Գոռ Հակոբյանի համատեղ նախագծի հերթական եթերաշրջանը: Parie Media-ի հետ համատեղ դերասանները կիսվել են նախագծի անոնսով, որից ղարզ է դառնում, որ, նախորդ եթերաշրջանների համեմատությամբ, տեղի են ունեցել դերասանական կազմի փոփոխություններ:

Նախագծի առաջին սերիայի թողարկումը արդեն տեղի է ունեցել:

Սցենարիստն Անի Մաղաքյանն է: Պրոդյուսերները Ինննա Խոջամիրանն ու Գոշ Հակոբյանն են:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Ինննա Խոջամիրյանը ներկայացրեց մանրամասներ «Hotel Grand 3»-ից:

«Սա «Hotel Grand-ի» վերջին եթերաշրջանն է, որտեղ անդրադարձ ենք արել լուրջ խնդրի. բիզնեսմենները ամեն բան փորձում են գնել ու սեփականաշնորհել՝ հողը բիզնես դարձնելով, եւ հակառակ կողմում՝ մարդիկ, ովքեր ամուր կպած են իրենց փոքրիկ հողին ու դեմ են նման իրողությանը:

«Hotel Grand-ը» ընդլայնման ենթակա է, սակայն այն հողը, որն ուզում է սեփականատերը գնել, Առնոյինն է, որը ոչ մի դեպքում չի ուզում այն վաճառել: Ժամանակին եւս խոշոր բիզնեսներ ունենալուց հետո մեկուսացել է աշխարհից ու իր մի կտոր ֆերմայում է ապրում»:

Ինննայի խոսքով՝2 տարբերակ կար՝կամ պատմությունը գեղեցիկ ավարտին հասցնել, կամ անցնել լրիվ ուրիշ նախագծի:

««Hotel Grand-ը» մեր առաջնեկն է, սիրուն եզրափակում որոշեցինք տալ: 3-րդ եթերաշրջանում չկան միայն այն կերպարները, ում պատմությունը հասել էր տրամանաբանական հանգուցալուծմանը»:

Հավելենք, որ երրորդ եթերաշրջանում նոր դերասանական կազմը համալրել են Նազենի Հովհաննիսյանը, Խորեն Լեւոնյանը, Անի Խաչիկյանը, Թաթուլ Փոստանջյանը, Էմմա Ազիզյանը, Լյով Խուրշուդյանը, Հրանուշ Ավոյանը եւ այլք:

Հիշեցնենք, որ ինստագրամյան իր էջում հրապարակված հոլովակին կից Խոջամիրյանը գրել էր. «Սիրուն աշխատած ու փայփայած նախագիծը, որը Ձեր դատին պիտի հանձնեինք դեռ 10 օր առաջ, գալիս է եթեր:

Սեր կա, հոգի կա ու նոր պատմություն...

Շնորհակալ եմ իմ ուժեղ թիմին, գործընկերներին, բոլորին:

Հոկտեմբերի 16-ից... »:

Նախագծի սցենարիստ Անի Մաղաքյանը ֆեյսբուքյան իր էջում հայտնել էր, որ նախագիծը «փայփայել է» մոտ 2 տարի: «Իսկ հետո Ինննան եւ Գոշը հավատացին դրան այնքան, որքան ես... Եվ մենք ստացանք «Hotel Grand 3-ը»»,- հավելել էր նա:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԲԱՐԿՈՎԱՆ՝ ՈՐԴՈՒ ՀԵՏ ⇨

Հնդկաստանաբնակ դերասանուհի Սիլվա Բարկովան նշել է ազգային «Նավրատրիի» տոնը: Այն Հնդկաստանում սկսում են նշել նորալուսնից հետո առաջին օրը, որի ժամանակ անցկացվում են տաճարային փառատոններ, կատարվում են աղոթքներ, կազմակերպվում են ծիսական երթեր եւ տոնավաճառներ: Հաճախ փառատոնի առաջին երեք օրերը նվիրված են աստվածուհի Լակշմիին, հաջորդ երեքը՝ Դուրգային, իսկ վերջինը՝Սարասվաթիին:

Դերասանուհին տոնը անցկացրել է Մումբայում: Նա լուսանկարներ է հրապարակել որդու հետ՝ նրա դեմքը փակելով «սրտիկով» եւ կից գրելով՝ «Ուրախ Նավրատրի»:

Հիշեցնենք, որ Սիլվի Բարկովայի ամուսինը ազգությամբ հնդիկ է: Նա նախկինում աշխատել է որպես մոդել, հիմա ունի սեփական բիզնես պրոդյուսերական ոլորտում: Հավելենք, որ դեռ այս տարվա մարտին դերասանուհին ամուսնու հետ եկել էր Հայաստան երեխային հայրենիքում լույս աշխարհ բերելու նպատակով:

ԿԻՍՎԵԼ Է ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Ամերիկաբնակ դերասանուհի, երգչուհի Քրիստինա Եղոյանը ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում կիսվել է այն դժվարությունների մասին, որոնք հանդիպում են իրեն եւ շատ մայրիկների երեխաներին խնամելիս:

«Երբ երազում էի մեկ տարվա տարբերությամբ աղջիկներ ունենալու մասին, չէի պատկերացնում, թե այդ երազանքի ետեւում ինչքան դժվարություն ու պատասխանատվություն կա: Ստիպված ես ապրել գերհոգնածությամբ, մաքսիմալ լարված, երբեմն ամբողջ օրը ոչինչ չկերած կամ գիշերը չքնած, բայց էս բարդ պահերին միշտ պիտի հիշես, որ էս դժվարությունները ժամանակավոր են. կգա մի օր, երբ կարթնանաս այն պահին, երբ օրգանիզմդ ամբողջությամբ հագեցած կլինի քնից, ուտելիս կվայելես կերակուրը, կարող ես համարել, որ այսօր ի վիճակի ես ծանր օրվանից հետո երեկոյան որեւէ տեղ զբոսնել... Հուսանք ու սպասենք այդ օրվան»,- գրել է նա:

Հիշեցնենք, որ դեռեւս 2 տարի առաջ՝ 2021 թվականին, դերասանուհի, երգչուհի Քրիստինա Եղոյանն ամուսնացել էր գործարար Սիմոն Խաչատրյանի հետ՝մշտական բնակություն հաստատելով Միացյալ Նահանգներում: Հենց նույն թվականին էլ ծնվել էր դերասանուհու առաջնեկը՝ Լեա-Մարիան, ավելի ուշ՝ 2022-ի դեկտեմբերին, ծնվեց Քրիստինեի երկրորդ դուստրը՝Լյուսին, որի մասին հայտնել էր նա իր ինստագրամյան էջում: Երբ դեռ Լյուսին չէր ծնվել, Քրիստինա Եղոյանը հրապարակել էր հոլովակ, որում խոսում էր Լեայի հետ երկրորդ դուստր ունենալու իր երազանքի մասին: «Երազանքներն իրականանում են»,- գրել էր Քրիստինան հոլովակին կից:

Մ. ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՊՈՐՏ

ՆԵՏԱՁԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Երեւանում հոկտեմբերի 10-16-ն անցկացվել է «Հայկի նետեր» նետաձգության միջազգային մրցաշարը, որին տարբեր տարիքային խմբերում Հայաստանից, Վրաստանից, Ղազախստանից եւ Արաբական Միացյալ Էմիրություններից շուրջ 80 մարզիկ է մասնակցել: Մրցաշարին հետեւել է նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

«Հայկի նետեր» միջազգային մրցաշարն անցկացվել է 4 տարիքային խմբերում: Մինչեւ 12 տարեկան մարզիկները մասնակցել են 18 մետր, մինչեւ 16 տարեկան մարզիկները՝40 մետր, մինչեւ 20 տարեկան մարզիկները՝60 մետր, իսկ 21 տարեկանից բարձր մարզիկները՝ 70 մետր մրցաձեւերում:

Մեծահասակների 70 մետր մրցաձեւում հաղթողի կոչմանն արժանացել է Վասիլ Շահնազարյանը, արծաթե մեդալակիր է դարձել վրացի Ջավա Մաշեշվիլին, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Ամիր Սանդուեւը Ղազախստանից: Աղջիկների անհատական պայքարում հաղթող է ճանաչվել Ղազախստանի ներկայացուցիչ Մաբինա Ջոյիմավան, երկրորդ տեղը գրավել է Չիկո Բուտկարաձեն Վրաստանից, իսկ երրորդ տեղում Հայաստանի ներկայացուցիչ Արփի Վարդանյանն է:

Մեծահասակների շրջանում անցկացվել են նաեւ թիմային մրցումներ: 70 մետր մրցաձեւի տղաների պայքարում հաղթողի կոչմանն արժանացել է «Երեւան 1» թիմը, երկրորդ տեղը զբաղեցրել է «Երեւան 2»-ը, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Ղազախստանի երկրորդ թիմը: Աղջիկների պայքարում թիմային առաջին տեղը զբաղեցրել է հայ եւ վրացի մարզիկներից կազմված թիմը, երկրորդ եւ երրորդ տեղերը գրավել են Ղազախստանի առաջին եւ երկրորդ թիմերը համապատասխանաբար:

Հայաստանի նետաձգության հավաքականի գլխավոր մարզիչ Բորիս Վասիլյանի խոսքով՝ մրցաշարին Հայաստանի շուրջ 40 ներկայացուցիչ է մասնակցել. հայ մարզիկները հաջող մրցելույթներ են ունեցել եւ մրցանակային տեղեր զբաղեցրել, ինչը, մարզչի գնահատմամբ, բավականին գոհացուցիչ է:

Ի դեպ, «Հայկի նետեր» միջազգային մրցաշարն անցկացվել է շուրջ 10 տարվա դադարից հետո:

«Սա մեր ավանդական մրցաշարերից է, բայց տասը տարի առաջ դադարեցրինք այն անցկացնել մի շարք խնդիրների պատճառով: Ուրախ եմ, որ այս տարի հաջողվեց վերսկսել: Վստահ եմ՝ կշարունակենք ու տարեցտարի մրցաշարի աշխարհագրությունն ընդլայնելով՝ կունենանք ավելի մեծ թվով մասնակիցներ: Արդեն իսկ հետաքրքրությունը մեծ է»,- նշում է Բորիս Վասիլյանը: Հայաստանում նետաձգությամբ զբաղվող շուրջ 80 երեխաներ կան, որոնք մարզումներն իրականացնում են Երեւանում, Գյումրիում եւ Աշտարակում: Հավաքականի գլխավոր մարզչի խոսքով՝ առաջիկայում եւս մեկ մրցաշար կանցկացվի՝ արդեն տեղացի մարզիկների մասնակցությամբ: Նշենք նաեւ, որ Հայաստանի նետաձգության հավաքականը նոյեմբերին, ամենայն հավանականությամբ, միջազգային մրցաշարի կմասնակցի Տաջիկստանում, իսկ դեկտեմբերին՝Ռուսաստանում:

● *Հոկտեմբերի 19-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Ջավեշտալի կատակերգություն՝հյուրանոցում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ:*

ԵՂԵ՞Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե երբ է մերժվում կենսաթոշակ նշանակելը:

Էմմա Առաքելյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Առաքելյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

- անձը չունի կենսաթոշակի իրավունք,
- կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,
- ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը: Ի դեպ, աշխատող կենսաթոշակառուների կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե կենսաթոշակը նշանակելուց (վերահաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակառուն ներակայացրել է կենսաթոշակը նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու դիմում:

Ընդ որում, վերահաշվարկված կենսաթոշակը նշանակվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ քանի օրինակից է կնքվում ստորագրությունների իսկության ճանաչմամբ կնքվող պայմանագիրը:

Իրինա Մուքայելյան (32 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ստորագրությունների իսկության ճանաչման նպատակով ներկայացվող պայմանագիրը ստորագրվում եւ ընդունվում է պետական գրանցման մեկ օրինակից, որը համարվում է այդ պայմանագրի բնօրինակը եւ պահպանվում է տվյալ անշարժ գույքի միավորի համար կազմված կադաստրային գործում:

Պայմանագրի կողմի դիմումի հիման վրա՝ նրան տրամադրվում է պետական գրանցման ընդունված պայմանագրի պատճենը՝ հաստատված Կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակի կնիքով: Նման կարգով տրամադրված պատճենը եւ անշարժ գույքի ռեգիստրում պահպանվող պայմանագրի բնօրինակն ունեն հավասար իրավաբանական ուժ:

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակներում անշարժ գույքի գործարքները կարող են կնքվել միայն ՀՀ կառավարության կողմից հաստատված օրինակելի պայմանագրերի հիման վրա: Եթե կողմերին անհրաժեշտ է ներառել լրացուցիչ պայմաններ, որոնք նախատեսված չեն օրինակելի պայմանագրերում, ապա նման դեպքում գործարքը կպահանջի նոտարական վավերացում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայ բռնցքամարտիկներն ավարտել են ելույթները Մոնտենեգրոյի Բուդվա քաղաքում անցկացված Եվրոպայի գավաթի խաղարկությունում՝ նվաճելով 1 ոսկե, 1 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ:

Թիմային պայքարում Հայաստանի ընտրանին զբաղեցրել է 3-րդ տեղը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 5 +10+ 16
Կոտայքի լեռներ	+ 2 + 5 +11 + 15
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 +16 + 19
Գեղարքունիք	+ 1 + 5 +10 + 14
Լոռի	+ 1 + 6 +15 + 20
Տավուշ	+ 4 + 9 +16 + 21
Արագածոտնի լեռներ	0 + 4 +10 + 14
Արագածոտնի նախալեռներ	0 + 4 + 11 + 15

Արարատ	+ 9 + 11 +19 + 21
Արմավիր	+ 7 + 10 +21 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 1 + 3 +11 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10 +20 + 24
Սյունիքի հովիտներ	+10+ 13 +20 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 8 +14 + 18
ԼՂՀ	+ 6 + 10 +15 + 19
Երեւան	+ 5 + 10 +18 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.10.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*